



*Empowered lives.
Resilient nations.*

«ԵՄ կլիմայի համար»

Ազգային մեկնարկային սեմինար
Հայաստանում

30 ապրիլի 2019թ.
Երևան


«ԵՄ Կլիմայի համար». հակիրճ

«ԵՄ Կլիմայի համար» ծրագիրը օգնում է կառավարություններին Եվրոպական գործընկերության վեց երկրներում՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն, ձեռնարկել միջոցներ կլիմայի փոփոխության դեմ: Այն աջակցում է երկրներին իրականացնել Փարիզի կլիմայի մասին համաձայնագիրը և բարելավել կլիմայի բաղաբաղականությունը և օրենսդրությունը: Ծրագրի հավակնությունն է կրճատել կլիմայի փոփոխության ազդեցությունը բաղաբաղականության կյանքի վրա և դարձնել ավելի դիմակայուն վերջինիս նկատմամբ: «ԵՄ Կլիմայի համար»-ը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից և իրականացվում է Միավորված Ազգերի Չարգացման Ծրագրի կողմից:



Empowered lives.
Resilient nations.

- Նպատակ՝ Ցածր արտանետումների և կլիմայի դիմակայունության նպատակները ներդրված են ԱԳ-ի 6 երկրների զարգացման քաղաքականությունում և պլաններում՝ բարելավված և համախմբված կլիմայական քաղաքականության և օրենսդրական համապատասխանեցման միջոցով
- Ընդհանուր բյուջե՝ 8.800.000 Եվրո/ 10.302.160 ԱՄՆ դոլար
 - ✓ 8 միլիոն Եվրո՝ ԵՄ
 - ✓ 0,8 միլիոն Եվրո՝ ՄԱԶԾ
- Տևողությունը՝ 2019-2022թթ.
- Տարածաշրջանային համագործակցություն, ուսուցում և քաղաքականության երկխոսություն + տեխնիկական օգնություն ազգային մակարդակում



«ԵՄ կլիմայի համար». քաղաքականության համատեքստ



Empowered lives.
Resilient nations.

- ❖ Կլիմայի փոփոխության մասին Փարիզի համաձայնագիր (ՓՀ, 2016թ.)
- ❖ ՓՀ թափանցիկության շրջանակ
- ❖ ՓՀ կանոնագիրք՝ Կատովիցեի կլիմայի փաթեթ
- ❖ ԱԳ '20-ի արդյունքները 2020թ.-ի համար՝ (2017թ.)՝ Արդյունքներ 15 և 16 ԵՄ Կլիմայական նորմատիվային ակտեր
- ❖ Էներգետիկ համայնքի նորմատիվային ակտեր
- ❖ ԵՄ Մոնիտորինգի մեխանիզմի կանոնակարգ (ՄՄԿ)
- ❖ Կլիմայի և էներգետիկայի ոլորտի քաղաքապետերի դաշնագիր (ԲԴ)
- ❖ ՓՀ-ի Ազգային մակարդակով սահմանված ներդրումներ (ԱՄՍՆ) ԱԳ-ի 6 երկրներում
- ❖ Ազգային և ոլորտային զարգացման ռազմավարություններ, ԱՌԿ ազգային ռազմավարություններ
- ❖ Օրակարգ 2030, ԱՌԿ-ի Սենդայի շրջանակներ

«ԵՄ կլիմայի համար»-ի ակնկալվող արդյունքները

1. Լրամշակված կամ նորացված Ազգային մակարդակով սահմանված ներդրումներ/գործողություններ (ԱՍՆ, NDC) և դարի կեսերի ազգային ռազմավարությունները ներկայացվել են ՄԱԿ-ի ԿՓՇԿ, UNFCCC
2. Հաստատությունների միջև բարելավված իրազեկվածություն և համակարգում
3. Կայացած կամ ուժեղացված ՉՀՀ, MRV համակարգեր այն երկրների հետ, որոնք հաշվի են նստում Փարիզի համաձայնագրի թափանցիկության պահանջների հետ
4. Ավելի բարձր մակարդակի համահարթեցում ԵՄ նորմատիվային ակտերին՝ ԵՄ-ի հետ երկկողմ համաձայնագրերի դրույթների համաձայն և Էներգետիկ համայնքի համաձայնագրի համատեքստում
5. Կոնկրետ ոլորտային ուղեցույցների սահմանում՝ Արևելյան գործընկերության յուրքանջյուր երկրում՝ Փարիզի համաձայնագրի իրականացման նպատակով
6. Կլիմայական ֆինանսների մոբիլազացման բարձրացում (այդ թվում **NIF/NIP**-ի ներքո)
7. Հարմարվողականության ազգային և ոլորտային պլանների ընդունում

Բաղադրիչ 1. ԱՄՆ իրականացում և թարմացում ըստ Փարիզի համաձայնագրի

- 1.1. Տարածաշրջանային երկու ուսուցողական և գիտելիքների փոխանակման աշխատաժողովներ ԱՄՆ իրականացման և ՄԱԿ-ի ԿՓՇԿ հաղորդման վերաբերյալ (Թափանցիկության ընդլայնված շրջանակի ներքո):
- 1.2. Աջակցություն ԱՄՆ իրականացմանն Արևելյան հարևանության առնվազն չորս երկրներում:
 - ԱՄՆ իրականացմանը նպաստող ազգային և ոլորտների ռազմավարությունների և պլանների ուսումնասիրություն:
 - Գերակա ոլորտների զարգացման հնարավոր սցենարների մոդելավորում: Գերակա ընտրված ոլորտների համար մշակվում կամ թարմացվում են մանրամասն ռազմավարություններ և պլաններ Բաղադրիչ 5-ի շրջանակում (կլիմայի փոփոխության խնդիրների ներկառուցում) ԱՄՆ թիրախների իրականացման ապահովման նպատակով:
 - Համապատասխան նախարարություններում արդիական ոլորտների մասով հատկորոշվում և հաստատվում են համակարգման պատասխանատուներ (focal points) դրանցում ԱՄՆ իրականացումն ապահովելու նպատակով: ԱՄՆ մշակման, իրականացման և հաշվետվողականության ապահովման նպատակով ոլորտների մասով ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում:
 - Առանձին երկրներում բարձր մակարդակի և տեխնիկական ազգային կլոր սեղաններ և աշխատաժողովներ՝ թիրախային տարբեր խմբերի մասնակցությամբ ԱՄՆ ըստ ոլորտների իրականացման արդյունքների և հետագա քայլերի քննարկման համար:
 - ԱՄՄՆ իրականացման պլանների կամ ճանապարհային քարտեզների մշակում, ներառյալ ժամկետներ, ազգային և սեկտորների համար պատասխանատու հաստատություններ, ԱՄՆ թարմացման և երկրորդ ԱՄՆ մշակման պլաններ:
 - Աջակցություն երկրներին ԱՄՆ իրականացման վերաբերյալ հաշվետվության համակարգերի ստեղծման համար և օժանդակություն հաշվետվությունների կազմմանը Փարիզի համաձայնագրի շրջանակում (Թափանցիկության ընդլայնված շրջանակի ներքո):
 - Աջակցություն ԱՄՄՆ թարմացմանը՝ ըստ ԱՄՄՆ պատրաստման վերաբերյալ ՄԱԿ-ի ԿՓՇԿ ուղեցույցի վերջին խմբագրության և ԵՄ լավագույն փորձի հիման վրա:
- 1.3. ԱՄՆ մասին հանրային իրազեկում. ըստ ԱՄՆ իրականացման փուլերի՝ իրազեկման բարձրացման գործողություններ մասնավոր հատվածի, գիտական և ուսումնական հաստատությունների, ՀԿ համայնքի և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի համար:

Բաղադրիչ 2. ՋԳ ցածր արտանետումներով զարգացման ազգային երկարաժամկետ (դարամիջյան) ռազմավարությունների մշակում (երկարաժամկետ ՑԱՁՌ)

- 2.1. Տարածաշրջանային ուսուցումներ և աշխատաժողովներ ՑԱՁՌ մշակման գործընթացի վերաբերյալ վեց շաբառու երկրների համար: Առաջին ՑԱՁՌ աշխատաժողովին անդրադառնում է ԵՄ անդամ երկրների և շաբառու երկրների (Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան) լավագույն փորձին՝ օրինակներով և ներկայացվում է ՑԱՁՌ-ի համար ՄԱՁԾ ուղեցույցը և գործիքները: Պետք է վերապատրաստվեն շաբառու երկրներից առնվազն 18 ներկայացուցիչներ:
- 2.2. Ազգային տեխնիկական կլոր սեղաններ, ներառյալ մասնավոր հատվածը, տեղական իշխանությունները և քաղաքացիական հասարակությունը, քննարկելու և հաստատելու ՑԱՁՌ մշակման համար ազգային համակարգման մեխանիզմները: Շահագրգիռ կողմերի մասնակցություն, ազգային այլ ռազմավարությունների հետ համատեղում, ՑԱՁՌ մշակման գործընթացի մեկնարկ: Պետք է վերապատրաստվեն առանցքային նախարարությունների 80 պետական պաշտոնյաներ և փորձագետներ, իրենց գիտելիքները և պատկերացումը հարստացնելու և իրենց երկրներում ՑԱՁՌ մշակման գործընթացի առաջատարը դառնալու համար:
- 2.3. Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում և Վրաստանում դարամիջյան երկարաժամկետ ՑԱՁՌ մշակում, դրդված ԱՄՄՆ թիրախներով: ՑԱՁՌ մշակումը ներառում է ծախսերի և օգուտների վերլուծությունը: ՑԱՁՌ վերջնական տարբերակը ներկայացվում է երկրների կառավարությունների հաստատմանը:

Բաղադրիչ 3. Երկրի ներքին արտանետումների ՉՀՀ ընդգրկուն շրջանակների ներդրում

- 3.1. Տարածաշրջանային աշխատաժողով կամ ուսուցում ՉՀՀ համակարգերի (ՋԳ կադաստրի) վերաբերյալ ըստ ՄԱԿ-ի ԿՓՇԿ պահանջների և համաձայն ԵՄ ՄՄԿ և ԵՄ երկրների լավագույն փորձի:
- 3.2. Ուսուցողական շրջայց՝ ԵՄ-ում ՉՀՀ համակարգերի (ՋԳ կադաստրի) վերաբերյալ գիտելիքներ հարստացնելու նպատակով:
- 3.3. Շահառու երկրներում առկա ՉՀՀ համակարգերի (ՋԳ կադաստրի) վերանայում, բացերի վերլուծություն և կարիքների գնահատում: Սա ներառում է ՋԳ արտանետումների հաշվառման գործող ազգային/ոլորտային/կորպորատիվ վիճակագրական շրջանակների և տեղեկատվական համակարգերի վերանայում:
- 3.4. Երկրների ազգային պայմաններին հարմարեցված՝ ՉՀՀ համակարգերի (ՋԳ կադաստրի) համար առաջարկներ, մշակված ըստ ՄԱԿ-ի ԿՓՇԿ թափանցիկության պահանջների և հիմնված ԵՄ փորձի վրա:
- 3.5. Պրոֆիլային նախարարությունների՝ էներգետիկա, տրանսպորտ, շրջակա միջավայր, գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, և համապատասխան այլ պետական մարմինների տեխնիկական վարչություններից ՉՀՀ համակարգերի (ՋԳ կադաստրի) փորձագետների վերապատրաստում: Երկրի մակարդակով ՉՀՀ համակարգերի (ՋԳ կադաստրի) վերաբերյալ ուսուցումների կազմակերպում, որտեղ պետք է վերապատրաստվեն վերոնշյալ ալորտներն սպասարկող պետական մարմիններից 100 տեխնիկական փորձագետներ կամ պաշտոնյաներ:
- 3.6. Մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերին ՋԳ ազգային կադաստրներում իրենց ներդրման վերաբերյալ անգլերեն և ազգային լեզուներով ուսումնական նյութերի մշակում և ներկայացում:

Բաղադրիչ 4. Համահարթեցում երկկողմ համաձայնագրերում և Էներգետիկ համայնքի դաշնագրում ներառված ԵՄ իրավական շրջանակի (acquis) հետ

- 4.1. Աշխատաժողովներ երկրներից յուրաքանչյուրում համապատասխան (acquis) ԵՄ իրավական շրջանակի:
- 4.2. Ազգային օրենսդրության և հարկաբյուջետային քաղաքականությունների վերլուծություն, օրենսդրական համահարթեցման նպատակով առաջարկների և պլանների մշակում, ինչպես նախատեսված է Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի հետ Ասոցացման համաձայնագրերով, Հայաստանի հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով, Բելառուսի և Ադրբեջանի հետ Գործընկերության գերակայություններով, նաև Էներգետիկ համայնքի համապատասխան ցանկացած առաջարկություններով և որոշումներով: Կատարվում է գործող օրենսդրության և ռազմավարական պլանների հետ բացերի վերլուծություն՝ իրականացման ճանապարհային քարտեզ, որի արդյունքները կիրառվում են: Մշակվում են քաղաքականության փաստաթղթեր և պլաններ օրենսդրական համահարթեցման համար, որը նախատեսված է վերոնշյալ համաձայնագրերով, դրանց իրականացման համար տրամադրվում է տեխնիկական աջակցություն և ուղղորդում:
- 4.3. Ծրագիրն ապահովում է առաջընթացի մասին պահանջվող նյութեր ենթակոմիտեների նիստերի, հարթակի և խորհուրդների քննարկումների, Էներգետիկ համայնքի նիստերի համար և ներկայացնում է թարմացումներ ՀԸԲԳՏ-ին և ԵՄ համապատասխան պատվիրակություններին:

Բաղադրիչ 5. Այլ ոլորտներում կլիմայի փոփոխության խնդիրների ներառում, ոլորտային ուղեցույցների մշակումը Փարիզի համաձայնագրի իրականացման համար

5.1. Մեկնարկային/ուսուցողական աշխատաժողով ոլորտային քաղաքականության մեջ ԿՓ-ի ներառման վերաբերյալ

5.2. Յուրքանչյուր երկիր մշակում է գենդերային տեսակետից զգայուն ԿՓ խնդիրների ներառման առաջարկներ առնվազն 2 գերակայական ոլորտների համար: Այն ընդգրկելու է ոլորտային մանրամասն ուսումնասիրում, կլիմայական ռիսկերի և ՋԳ արտանետումների կրճատման ներուժի վերլուծություն, **CBA-ը**, ներառման հետ կապված առաջարկները, կարգավորող/ինստիտուցիոնալ /համակարգման շրջանակը, մոնիտորինգի շրջանակը, ինչպես նաև ֆինանսական միջոցների պլանավորումը:

* Էներգետիկայի ոլորտը լինելու է կարևոր գերակայություն սույն բաղադրիչի ներքո: Խորհրդատվություններ են անցկացվելու ՄԷԳ-ի, IEA հետ, ընդլայնելով ՄԷԳ-ի ներգրավումը:

** Հաշվի է առնվելու «Շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության ինտեգրումը ԵՄ միջազգային համագործակցության և զարգացման մեջ. դեպի կայուն զարգացում» ուղեցույցը:

*** Ի լրումն էներգետիկայի, Ղեկավար կոմիտեի կողմից համաձայնեցվելու է գերակա ոլորտների ընտրությունը:

5.3. Ոլորտային խնդիրներին նվիրված վերապատրաստման և գիտելիքների փոխանակման երեք ենթատարածաշրջանային սեմինարներ, նաև մի շարք ազգային խորհրդակցություններ և աշխատաժողովներ (անհրաժեշտության դեպքում, բարձր մակարդակի միջոցառումներ) ոլորտների շահագրգիռ կողմերի և որոշում կայացնողների մասնակցությամբ՝ ոլորտային քաղաքականության, ռազմավարության և ծրագրման մեջ կլիմայի փոփոխության խնդիրների ներկառուցման վերաբերյալ:

5.4. Փարիզի համաձայնագրի իրականացման նպատակով ոլորտային ուղեցույցներ:

Բաղադրիչ 6. Կլիմայի փոփոխության գծով ներդրումներ

6.1. Երկու տարածաշրջանային ֆորումներ կլիմայի փոփոխության գծով ֆինանսավորման ընդլայնման վերաբերյալ. տարածաշրջանային միջոցառումներ, նվիրված ներդրումների պլանավորմանը և կլիմայի փոփոխության գծով հավաքագրված միջոցների ծավալի ավելացմանը: Միջոցառումները շահառու երկրներին հնարավորություն են ընձեռում քննարկել կլիմայի փոփոխության գծով ֆինանսավորումը հայցելու և հավանությանը հասնելու խնդիրներ, վերանայել կլիմայի փոփոխության գծով ներդրումների պլանավորման և բյուջետավորման գործիքները, հանդիպել և համագործակցել ՄՖՀ-ների, դոնորների և հնարավոր ներդրողների հետ:

6.2. Դասընթացներ, խորհրդատվություններ և կարողությունների հզորացում, նախարարությունների համապատասխան աշխատակիցների համար ազգային մակարդակով սեմինարների և խորհրդատվական ծառայությունների միջոցով, որպեսզի նրանք կարողանան մշակել բանկերին ներգրավելու ունակ ծրագրեր՝ հաստատման առաջնահերթությամբ, այսպիսով ներկառուցելով կլիմայի փոփոխության խնդիրները ֆինանսավորման ազգային գործիքներում:

6.3. Տարածաշրջանային և ազգային աշխատաժողովներ կլիմայի փոփոխության գծով ֆինանսավորման շրջանակների վերաբերյալ՝ ֆինանսների, էկոնոմիկայի և պլանավորման նախարարությունների մասնակցությամբ:

6.4. Երկու ազգային փորձնական ուսումնասիրություն կլիմայի փոփոխության գծով ֆինանսավորման շրջանակների, կլիմայի փոփոխության խնդիրները բյուջեներում հատկորոշման և կլիմայի փոփոխությանն առնչվող չափորոշիչների՝ ազգային բյուջեի պլանավորման և ֆինանսների նախարարությունների հաշվետվայնության համակարգերի մեջ ներկառուցման վերաբերյալ:

Բաղադրիչ 7. Հարմարվողականության պլանավորում, կենտրոնանալով հարմարվողականության պլանների ընդունման և, ըստ անհրաժեշտության, դրանց մշակման վրա

7.1. Աջակցություն առնվազն երկու երկրներում ազգային հարմարվողականության պլանավորմանը (ԱՀՊ):

*Կատարվելիք աշխատանքների շրջանակի ուսումնասիրություն, ճանապարհային քարտեզ, ԱՀԾ մշակում, նաև ինստիտուցիոնալ, համակարգման, ֆինանսավորման, մոնիտորինգի, հաշվետվողականության և հաղորդակցության շրջանակներ ԱՀԾ համար:

7.2. Աջակցություն ազգային և ոլորտային հարմարվողականության պլանների ընդունմանը և ուղղորդում դրանց իրականացման համար: Այս գործողության իրականացման առաջնային միջոցն է բարձր մակարդակի միջոցառումների կազմակերպումն առկա ծրագրերի ընդունումն ու նորերի մշակման մեկնարկը դյուրացնելու համար:

7.3. ԱՀԾ մշակման, իրականացման և ՄԱԿ-ի ԿՓՇԿ հաղորդման վերաբերյալ երկրների միջև գիտելիքների փոխանակում (հարմարվողականության հաղորդագրություն ըստ Փարիզի համաձայնագրի): Հարմարվողականության պլանավորման գծով անդրսահմանային և միջտարածաշրջանային համագործակցության մասին խորհրդատվություններ/համահարթեցում: Տրամադրվում է աջակցություն ԱՀԾ վերաբերյալ հինգ տարածաշրջանային դասընթացների և գիտելիքների փոխանակման աշխատաժողովների համար:

7.4. Հարմարվողականության պլանավորման գործընթացի վերաբերյալ աշխատաժողովների կազմակերպում տեղական և ազգային իշխանությունների ներգրավմամբ:

Կախված ազգային համատեքստից՝ երկրները կարող են ընտրել հարմարվողականության պլանավորման գործիքների տարբեր ձևաչափեր (օրինակ՝ Ազգային հարմարվողականության ռազմավարություն, գործողությունների ծրագիր, հարմարվողականության շրջանակ և այլն):

**Բաղադրիչ 8. Մոնիտորինգ և գնահատում,
հաղորդակցություն, տեսանելիություն և
հաշվետվողականություն**

Բաղադրիչ 9. Ծրագրի կառավարում

«ԵՄ կլիմայի համար» ծրագրի բյուջեն և ֆինանսավորումը

Ըստ բաղադրիչների

Բաղադրիչ	Բյուջե, ԱՄՆ դոլար
1. ԱՄՍՆ	1.384.033,32
2. ՑԱԶՌ	1.383.105,60
3. ՉՀՀ	988.000,00
4. Համահարթեցում	602.000
5. ԿՓ խնդիրների ներառում	1.623.000
6. ԿՓ գծով ներդրումներ	475.000
7. Հարմարվողականության պլանավորում	1.162.000
8. C&V, ՄևԳ	1.045.036
9. Ծրագրի կառավարում	966.012
GMS 7%	673.973,08
ԸՆԴԱՄԵՆԸ՝	10.302.160,00

Ֆինանսական փոխանցումների մոտավոր ժամանակացույցը)

Տարի	Տրանշ, ԱՄՆ դոլար
2019թ.	2.036.087 (ստացված)
2020թ.	2.571.309
2021թ.	2.529.581
2022թ.	2.228.622
ԸՆԴԱՄԵՆԸ՝	9.365.600*

* Չգերազանցելով 8.000.000 Եվրոն

*** Ազգային հատկացումը Հայաստանի համար 4 տարվա համար՝ 857,000 Եվրո (\$930.365 ԱՄՆ), բացառությամբ տարածաշրջանային բաղադրիչով տրամադրվող լրացուցիչ աջակցությունը:**



*Empowered lives.
Resilient nations.*

Համակարգում ՄԱԶԾ-ի համապատասխան այլ նախաձեռնությունների հետ

ՄԱԶԾ-ի ԿՓ ծրագրերի ակնարկ

ՄԱԶԾ Ազգային մակարդակով սահմանված գործողությունների աջակցությունը ամբողջ աշխարհում և Եվրոպայում ու ԱՊՀ-ում




Empowered lives.
Resilient nations.

ԱՍՆ-ի աջակցության ծրագիր

- <http://www.ndcs.undp.org/>
- ՄԱԶԾ-ն կրկնապատկում է իր աջակցությունը ԱՍՆ-երի մասով
- Շարունակելու է նոր երկրների ընդգրկումը



Supported by:
 Federal Ministry for the Environment, Nature Conservation and Nuclear Safety
based on a decision of the German Bundestag



Կարողությունների ստեղծման նախաձեռնությունը թափանցիկության բնագավառում (ԳԷՖ)

Երկրի մակարդակով կլիմայական գործողության ծրագրեր

Կլիմայի փոփոխության մեղմմանը հարմարվողականություն (ՀՀ, ԱՖ, ԿԿՀ, ԳԷՖ, երկկողմ)

ԱՍՆ-ի գլոբալ գազաթափողով, Բեռլին ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների Կլիմայական գազաթափողով

ՄԱՁԾ վերահսկողական միջոցառումներ

- ❖ ՄԱՁԾ տարածաշրջանային գրասենյակ՝
 - Կլիմայի և Աղետների ռիսկերի նվազեցման թիմ՝ վերահսկողություն, ծրագրի կառավարում, Մոնիտորինգ և գնահատում, համակարգում և հաշվետվողականություն
 - Որակի ապահովման թիմ
 - Գործառնական թիմ և ծրագրի աջակցման թիմ
 - Ազգային գրասենյակի աջակցման թիմ

- ❖ ՄԱՁԾ ազգային գրասենյակներ


«ԵՄ Կլիմայի համար»-ի կառավարման միջոցառումները

Ծրագրի կառավարման գրասենյակ

- Կլիմայի և աղետների խումբ
- Ծրագրի ղեկավար/ Ավագ խորհրդական
- Ծրագրի տարածաշրջանային օգնական

ՄԱԶԾ Ազգային համակարգման գրասենյակ

- Կայուն աճի և զարգացման բաժնի ղեկավար
- Ազգային համակարգող (մասնակի զբաղվածությամբ)
- վարչական/ֆինանսական հարցերով օգնական



Ծրագրի խորհուրդ / Ղեկավար կոմիտե

- Ապահովում է ընդհանուր առաջնորդումը, ուղղորդումը և տնօրինումը
- ՂԿ անդամները՝
 - EC DG NEAR (համանախագահ), DG Clima, DG Energy, DG Environment, ԵՄ պատվիրակություններ
 - Եվրոպական արտաքին գործողությունների ծառայությունների
 - ՄԱԶԾ տարածաշրջանային գրասենյակ (համանախագահ), ՄԱԶԾ ազգային գրասենյակներ
 - Եվրոպական գործընկերության երկրներ (ծրագրի շահառուներ, համապատասխան նախարարությունների ներկայացուցիչներ)
- Հանդիպում է առնվազն տարին մեկ անգամ
- Քննարկում է ծրագրի առաջընթացը, աշխատանքային պլանները, նեղ տեղերը, արդյունքներ ստանալու ներուժը, ծրագրի շտկումների անհրաժեշտությունը և ուղղորդումը
- Դյուրացնում և ապահովում է ուժեղացված համակարգումը և նոր գործընկերությունները

«ԵՄ Կլիմայի համար»-ի շահագրգիռ կողմերը ազգային մակարդակում

- ՄԱԿ-ի ԿՓՇԿ ազգային համակարգողներ Եվրոպական գործընկերության երկրներում.
- Տեխնիկական վարչությունները սեկտորալ նախարարություններում/գերատեսչություններում (օրինակ, շրջակա միջավայրի, էներգետիկայի, բնական պաշարների, էկոնոմիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության, ֆինանսների և այլն.
- Արտանետումների առևտրի համակարգի (ETS) նախագծման, իրականացման և շահագործման համար պատասխանատու տեխնիկական և վարչական կառույցներ.
- Բնական պաշարների, օրինակ, անտառների, գետերի, օվկիանոսների կառավարման համար պատասխանատու տարածաշրջանային ազգային կառույցներ.
- Մաքուր զարգացման մեխանիզմի (ՄՁՄ), Համատեղ իրականացման (ՀԻ) և Արտանետումների միջազգային առևտրի լիազոր մարմին.
- Կանանց հանձնաժողովներ և համապատասխան գծայիտ նախարարություններ՝ կանանց հավասարության և կանանց հզորացման մանդատով.
- Այլ շահագրգիռ կողմեր, ինչպիսիք են տարածաշրջանային և տեղական կառավարությունները, գիտական շրջանակներ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և մասնավոր հատված:

2019թ. կողմնորոշիչ աշխատանքային պլան

Գործունեություն	2019թ.			
	Ե1	Ե2	Ե3	Ե4
0. Մեկնարկային սեմինար	X	X		
1. ԱՍԳ իրականացում եվ թարմացում ըստ Փարիզի համաձայնագրի (շարունակելի 2020թ.)	X	X	X	X
1.1. 1-ին Տարածաշրջանային սեմինար ԱՍՆ իրականացման և ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ին հաշվետվողականության վերաբերյալ		X		
1.2. Աջակցություն ԱՍՆ-երի իրականացմանը ԱԳ 4 երկրներում (շարունակելի 2020թ.-ին)	X	X	X	X
1.3. Հանրային իրազեկում ԱՍՆ-երի վերաբերյալ (շարունակելի 2020թ.)		X	X	X
2. Երկարաժամկետ ՑԱԶՌ-ի, LEDS մշակում	X	X	X	X
2.1. 1-ին Տարածաշրջանային ուսուցողական սեմինար ԼՑԱԶՌ-ի մշակման գործընթացի վերաբերյալ		X		
2.2. Ազգային տեխնիկական կլոր սեղաններ Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում և Վրաստանում		X	X	
2.3. Երկարաժամկետ ՑԱԶՌ-երի մշակում Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում և Վրաստանում	X	X	X	X
3. Երկրի ներքին ներդրումների ՉՀՀ ընդգրկում շրջանակների ներդրում	X	X	X	X
3.1. Տարածաշրջանային աշխատաժողով/ուսուցում ՉՀՀ համակարգերի վերաբերյալ ըստ ՄԱԿ-ի ԿՓՇԿ պահանջների		X	X	
3.2. Ուսումնական շրջաայց Շրջակա միջավայրի եվրոպական գործակալություն՝ ԵՄ ՉՀՀ համակարգին ծանոթանալու նպատակով				X
3.3. Երկրներում գործող ՉՀՀ համակարգերի ուսումնասիրում, բացերի և կարիքների բացահայտում	X	X	X	X
3.4. Առաջարկներ ՉՀՀ ազգային համակարգերի վերաբերյալ (ԶԳ գույքագրումներ) (շարունակելի 2020թ.-ին)				X

2019թ. կողմնորոշիչ աշխատանքային պլան

4. Երկկողմ համաձայնագրերում և Էներգետիկ համայնքի դաշնագրում ներառված ԵՄ իրավական շրջանակի (acquis) հետ համահարթեցում	X	X	X	X
4.1. Աշխատաժողովներ երկրներից յուրաքանչյուրում ԵՄ իրավական համապատասխան շրջանակի (acquis) վերաբերյալ:		X	X	X
4.2. Ազգային օրենսդրության և հարկաբյուջետային քաղաքականությունների վերլուծություն (շարունակելի 2020թ.-ին)		X	X	X
4.3. Ծրագիրն ապահովում է առաջընթացի մասին պահանջվող նյութեր համապատասխան ենթակոմիտեների նիստերի, հարթակի և խորհուրդների քննարկումների, Էներգետիկ համայնքի նիստերի համար և ներկայացնում է թարմացումներ DG NEAR-ին և ԵՄ համապատասխան պատվիրակություններին		X	X	X
5. Այլ սեկտորներում կլիմայի փոփոխության խնդիրների ներառում	X	X	X	X
5.1. Մեկնարկային/ուսուցողական աշխատաժողով ալորտների քաղաքականություններում ԿՓ խնդիրների ներառման		X		
5.2. ԿՓ խնդիրների ներառման առաջարկություններ առնվազն երկու գերակա ոլորտների համար (շարունակելի 2020թ.)		X	X	X
5.3. Ոլորտների խնդիրներին նվիրված վերապատրաստման և գիտելիքների փոխանակման աշխատաժողովներ			X	
5.4. Փարիզի համաձայնագրի իրականացման նպատակով ոլորտային ուղեցույցներ (շարունակելի 2020թ.-ին)		X	X	X
6. Կլիմայի փոփոխության գծով ներդրումներ	X	X	X	X
6.2 Ծրագրերի գերակայացված խողովակաշարերի մշակման ազգային աշխատաժողովներ (շարունակելի 2020թ.-ին)			X	X
6.3 Տարածաշրանային և ազգային աշխատաժողովներ կլիմայի փոփոխության գծով ֆինանսական շրջանակների վերաբերյալ			X	
6.4. Նախաձեռնել 2 ազգային փորձնական ուսումնասիրություն կլիմայի փոփոխության գծով ֆինանսավորման շրջանակների, կլիմայի փոփոխության խնդիրները բյուջեներում հատկորոշման և կլիմայի փոփոխությանն առնչվող չափորոշիչների՝ ազգային բյուջեի պլանավորման և ֆինանսների նախարարությունների հաշվետվայնության համակարգերի մեջ ներկառուցման վերաբերյալ:	X	X	X	X
7. Հարմարվողականության պլանավորում	X	X	X	X
7.1. Նախաձեռնել առնվազն երկու երկրներում ազգային հարմարվողականության պլանավորում:	X	X	X	X
7.3. 1-ին տարածաշրանային ԱՀՊ-ի աշխատաժողով:		X	X	
7.4. Աշխատաժողովներ ազգային և տեղական իշխանությունների համար			X	X

Հաջորդ քայլերը

- Ռեգիոնալ ծրագրի ղեկավարի, ազգային համակարգողների և օգնականների ներգրավում
- Երկրի մակարդակով խորհրդակցություններ աշխատանքային պլանի վերաբերյալ
- Միջազգային գործընկերների ներգրավում (Շրջակա միջավայրի եվրոպական գործակալություն, Միջազգային էներգետիկ գործակալություն, էներգետիկ համայնք, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, “ԵՄ Կլիմայի համար”, “ԵՄ Շրջակա միջավայրի համար”, GIZ...)
- 2019թ. մանրամասն աշխատանքային պլան՝ տարածաշրջանային և ազգային
- 2019թ. տեխնիկական առաջադրանքներ
- Մեկնարկային սեմինար և Ղեկավար կոմիտեի 1-ին հանդիպում (29 մայիսի, Վիեննա)

Շնորհակալություն

«ԵՄ Կլիմայի համար» ծրագիրը օգնում է կառավարություններին ԵՄ Արևելյան գործընկերության վեց երկրներում՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա, միջոցներ ձեռնարկել կլիմայի փոփոխության դեմ: Այն օգնում է երկրներին իրականացնել Փարիզի համաձայնագիրը և բարելավել կլիմայական քաղաքականությունը և օրենսդրությունը: Այն հավակնում է սահմանափակել կլիմայի փոփոխության ազդեցությունը քաղաքացիների կյանքի վրա՝ նրանց դանձնելով վերջինիս նկատմամբ ավելի դիմակայուն: «ԵՄ Կլիմայի համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության և իրականացվում՝ Մավորված Ազգերի շարժացման Ծրագրի կողմից:



EUROPEAN UNION



*Empowered lives.
Resilient nations.*